



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 ապրիլի 2025 թվականի N 450-Ն

ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ և 10-րդ մասերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել՝

1) բարձր տեխնոլոգիաների ոլորտի տնտեսավարող սուբյեկտներին աշխատանքային միգրանտների համար պետական աջակցության տրամադրման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) բարձր տեխնոլոգիաների ոլորտի տնտեսավարող սուբյեկտներին նոր աշխատողներ ներգրավելու համար պետական աջակցության տրամադրման կարգը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) բարձր տեխնոլոգիաների ոլորտի տնտեսավարող սուբյեկտներին մասնագիտական աշխատանք կատարող կադրերի պատրաստման և վերապատրաստման համար պետական աջակցության տրամադրման կարգը՝ համաձայն N 3 հավելվածի.

4) բարձր տեխնոլոգիաների ոլորտի տնտեսավարող սուբյեկտի վարձու աշխատող հանդիսացող աշխատանքային միգրանտին պետական աջակցության տրամադրման կարգը՝ համաձայն N 4 հավելվածի:

2. Սահմանել, որ՝

1) պետական աջակցության դիմելու համար իրավասու են այն կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը (այսուհետ՝ տնտեսավարող սուբյեկտ), որոնց գործունեության ոլորտը համապատասխանում կամ ներառում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի փետրվարի 13-ի N 142-Ն որոշման հավելվածով սահմանված՝ տնտեսական գործունեության տեսակները, ընդ որում՝ հայցվող ժամանակաշրջանում ավելացված արժեքի հարկի և (կամ) շրջանառության հարկի հարկային հաշվարկներով վերջիններիս հայտարարագրած գործունեության բոլոր տեսակներից իրացման շրջանառության առնվազն 90 տոկոսը պետական աջակցության տրամադրման հաշվետու ժամանակաշրջանում պետք է ձևավորվի նույն հավելվածով սահմանված բարձր տեխնոլոգիաների ոլորտի գործունեության տեսակներից (հանրագումարից)։

2) 2025 թվականի հունվարի 1-ից սկսած՝ պետական աջակցության հայցվող ժամանակաշրջանում, պետական աջակցության համար դիմող տնտեսավարող սուբյեկտները տնտեսական գործունեության տեսակների մասով չպետք է փոփոխություն կատարած լինեն հարկային մարմինն տրամադրվող իրենց հաշվետվություններում, բացառությամբ, երբ դիմող տնտեսավարող սուբյեկտը մինչև փոփոխությունները կատարելն արդեն իսկ բավարարում էր սույն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջները։

3) պետական աջակցություն ստացած տնտեսավարող սուբյեկտների կողմից հարկային մարմինն նախորդ ժամանակահատվածների համար ճշտված հարկային հաշվարկների ներկայացման դեպքում կատարվում են տրամադրված աջակցության գումարների վերահաշվարկներ, և ավել տրամադրված աջակցության գումարները վերադարձվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, եթե այլ բան սահմանված չէ օրենսդրությամբ։

3. Մասնագիտական աշխատանքների ցանկը սահմանված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի մարտի 27-ի N 353-Ն որոշմամբ հաստատված հավելվածով։

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, բացառությամբ սույն որոշման 1-ին կետի 4-րդ ենթակետի, որն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ից:

5. Սույն որոշման գործողությունը տարածվում է 2025 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա, բացառությամբ սույն որոշման 1-ին կետի 1-ին և 4-րդ ենթակետերի, որոնց գործողությունը տարածվում է նաև N 1 հավելվածի և N 4 հավելվածի 3-րդ կետերի 1-ին ենթակետերով սահմանված՝ 2022 թվականի մարտի 1-ից հետո աշխատանքային միգրանտի կարգավիճակով մասնագիտական աշխատանք կատարող անձանց հետ ծագած հարաբերությունների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան